ՍԵՐՈԲ

Սերքո տպագրվող պատումը գրառվել է տղերս գրողի կողմից 1956 թ. նոյեմբերին, Թբիլիսիից որդու՝ մեր անվանի լեզվաբան Աշոտ Սուքիասյանի մոտ Երևան հյուր եկած Մուրադ Կուբադյանից։

Մուրադը ծնվել է 1878 թ. Խլաթի Ծղակ գյուղում, որը եղել է Հարևան մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող Սերոբի ծննդավայր Սոխորդ գյուղին։ Մուրադը եղել է Սերոբի կրտսեր ժամանակակիցը, հանդիպել է վերջինիս իրենց սարերում՝ Նեմրութի փեշերին, տակավին պատանեկության տարիներին, 14—15 տարեկան հասակում, հետաղ եղած ժամանակ։ Սերոբը հարցաքննել է Մուրադին, թե որ գյուղից է և ումոնցից։ Ճանաչելով Մուրադի ծնողներին՝ Սերոբը ներկայացել է Մուրադին և ինչ որ հանձնարարականներ տվել։ Մուրադն իր հերթին հարց է տվել Սերոբին, թե ինչ իմաստ ունի նրա և իր մի քանի զինվորների պայքարը օսմանյան հզոր պետության դեմ։ Սերոբն սկզբից զայրացել է Մուրադի վրա՝ ասելով, թե «դա քո խոսքը չէ, քո մեծերի խոսքն է», ապա մեղմանալով՝ ավելացրել.

— Դդա, ես էլ գիտեմ, որ ոչ ես, ոչ էլ իմ զինվորները ոչինչ չենք կարող անել այս հսկա պետության դեմ։ Գիտեմ, որ վաղ թե ուշ մենք դատապարտված ենք մահվան։ Բայց մենք կռվում ենք ձեզ համար, գալիք սերունդների համար, որպեսզի դուք և նրանք հասկանան, որ մենք կնիկ չենք եղել, և հլու ու հնազանդ չենք տարել բռնության լուծը։ Մենք կզոհվենք, բայց օրինակ կծառայենք ձեզ և մյուսներին, որպեսզի ազգովի ոտքի կանգնեք և տապալեք այս անտանելի բռնակալությունը։

Առաջին աշխարհամարտից առաջ Մուրադը իր մի քանի ընկերներով մեկնում է Ամերիկա և զբաղվում սեզոնային աշխատանքով։ Սակայն 1915 թ. թերթերում կարդալով Անդրանիկ զորավարի կոչը, որով Հայաստան էին հրավիրվում զենքի ունակ բոլոր հայորդիները, Մուրադը շատերի հետ թողնում է Ամերիկան, վերադառնում Հայաստան և երեք խլաթցի երիտասարդների հետ ներկայանում Անդրանիկին։ Վերջինս իմանալով, որ բոլորը խլաթցիներ են, շատ է զայրանում (մանավանդ, որ այդ կոչերը, հակառակ իր կամքի, իր անունով հղել էր Հայաստանի կառավարությունը) և ասում.

— Խլաթի կոտորածից կատու չէր ազատվում, դուք հաղիվ փրկվել էիք, ինչո՞ւ նորեն եկաք,— և հայհոյում իր անունը շահարկողներին։ Եվ հենց այդ պատճառով էլ մերժում է նրանց խնդրանքը։

Սակայն Մուրադին այնուամենայնիվ հաջողվում է մտնել գեներալ Նազարբեկովի գլխավորած հայկական կորպուսը և մասնակցել Արևմտյան Հայաստանի համար մղված մարտերին։

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Մուրադը գալիս է Թիֆլիս, ուր հաստատվում է մշտական բնակության։

Մուրադն անձամբ ծանոթ է եղել Սերոբի զինվորներից շատերին, մանավանդ՝ խլաթցիներին (Առյուծ Ավագին, Բարսեղին, Փալաբեղ Կարապետին), Անդրանիկին և այլոց և քաջատեղյակ նրանց և Սերոբի բոլոր արարքներին։ Այս իմաստով Սերոբի մասին Մուրադի սույն պատումը, անկախ իր որոշ վիպական տարրերից, ունի պատմական բացառիկ հավաստիություն՝ հենված ստույգ ժամանակագրության, պատմական անձանց կոնկրետ անունների, արարքների, տեղավայրերի հիշատակումների վրա, բոլորը՝ համապատասխան գրավոր աղբյուրների տվյալներին։ Բայց կարևորն այն է, որ պատումը սերելով բանավոր ավանդությունից, մասնավորապես դեպքերին մասնակից ականատեսների վկայություններից և հենց իր՝ Մուրադի, իբրև Սերոբի կըրտ-

սեր ժամանակակցի ու վկայի կենդանի հուշերից, պահպանել է իրադարձությունների և անձանց պատմական ճշգրտությունը։ Այս տեսանկյունով Մուրադի պատումը որոշ մանրամասներով, հատկապես գինվորների անունների ու ծննդավայրերի, առանձին դեպքերի և դիպվածների ստույգ հիշատակմամբ կարող է պատմական կարևոր սկզբնաղբյուր ծառայել Սերոբի կյանքի ու գործունեության ընդհանուր պատկերը վավերագրելիս։

Մուրադը խառնվածքով իրապաշտ, սթափ մտածող, վիպական չափազանցություններն ու կրոնատենչական հավատալիքներն արհամարհող, դեպքերի ու դեմքերի պատմական իսկությունը գնահատող անձնավորություն էր։ Այս հանգամանքն իր հետքն է թողել նրա պատումի որոշակի սխեմատիզմի՝ իրադարձությունների ու անձանց, երբեմն չոր թվարկումների, վրա։ Այսուհանդերձ, նա, իբրև ժողովրդի ընդերքից ելած, գրից ու գրականությունից հեռու կանգնած, ժողովրդական մտածողությամբ օժտված մարդ, իր պատումն օժտել է վիպական որոշակի գծերով, որոնք պատումին հաղորդում են ինչ որ չափով գեղարվեստական, բանահյուսական երանգ։ Այս հանգամանքն էլ թույլ է տալիս Մուրադի պատումը գնահատել նաև բանագիտական հայեցակետով, որպես հայոց մեծ ազատամարտիկի շուրջը հյուսված և բանավոր ավանդված ժողովրդական մի արժեքավոր վիպական ստեղծագործություն։

Բահասիր. գիտ. դոկտոր ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սերոբ Վարդանյան գուլական մարդու տղա էր, Սոխորդ գյուղացի էր (գտնվում է Նամրութա սարի տակ, արևելյան կողմը)։ Ինք էլավ գնաց Ստամբոլ՝ աշխատանքի, յետո մտավ բանվորական շարքի մեջ։

Անգլիական թեսպանատուն շինում ին։ Էդ տեղաց ստարշին (բրիգադիր) թուրք էր, հայ բանվորներու ամեն մե քայլ, շենքերուց վերև բանձրանալիս, քյուֆուր էր տալիս։ Էտիկ հրամայում ա՝ Սերոբ էրկու վեղրո ջուր ա տանում վերև. Սերոբին ժամ ու եկեղեցի, օրենք ա քվրում։ Էդ ժամանակ Սերոբն էդ թուրքին քցում ա ներքև, թուրք տեղոցտեղ սատկում ա։

Էնտեղ թուրքյերը թէ՝ «Բիր էրման մուսուլման օլդուր դիր, թուքը, թուքը էրմանի դըր»[1]։

Սերոբն փախավ գնաց, չըկրցան բռնել։ Պարախոդով գնաց Բեկոզ՝ Աբրահամ փաշի ամառանոց։ Մի քանի օր էնտեղ աշխատավ, յետո թուրքյերն էնդրա ետևից ման կուգային, կուզեին բռնել։ Թուրքի փոլիցնյերն գնացին, առաջին անգամ Սերոբին հանդիպան, չին ճանաչի. թուրքյեր կը հարցնին.

— Վարդան Օղլի Սերոբն ուրտյե՞ղ ա։

Սերոբն գ'իմնա, օր իրեն կըհետևին, կըթողնա վեղրոն էնտեղ, կընստի պարախոդ, կերթա նորեն Ստամբոլ։ Երկրորդ օր տոմս խանյեց, գնաց Ռոմանիա՝ Սուլունիա քաղաք (Դանեբի վրա)։ Էնտեղ, պարախոդի վրա, Սերոբն գնաց աշխատելու, տեսավ, որ հույներն ու թուրքյեր միացած են, խայերուն գործ չեն տա, կըծեծեն խայերուն։ Էդտեղ Սերոբն տասնըմեկինգ խոգի լավ տղամարդկանց կազմակերպեց, յետո ասաց տղոց.

— Էգուց օր պարախոդ գ'ուկա՝ աշխատե՛ք. եթե օր հույներն ու թուրքյեր գ'ուկան՝ ծեծե՛ք, մ'վախեք։

Էդտեղ գործը հույներու ու թուրքերու ձեռքեն առան, կռիվ էղավ, մե քանի խոգի սպանվան հույներուց ու թուրքերուց։

Էնտեղ մե վանեցի մարդ կար՝ ղայֆեչի էր։ Էդ հույներն ու թուրքյերն բոլոր էդոր մուշտարիքն են։ Էդ դեպքից հետո, էդոնք խռովան, էլ չըգնացին ղայֆե խմելու։ Իրիկուն ղայֆաչին ըսեց.

— Էսքան տարի էս մարդիկ գալիս էին, էդ ո՞վ էր, օր խրտնցրեց հույներուն ու թուրքերուն, որ չեկան...

Ասացին էնտեղաց մարդիկ.

---

1 «Մի հայ մուսուլման սպանեց, բռնեք, բռնեք հային»։

— Էս Խլաթցի տղեն էրայ։

Սերոբն նստած՝ միամիտ ղայֆե էր խմում։ Ղայֆեչին մոտեցավ Սերոբին, մե երկու սիլլա խփեց։ Սերոբն ոչինչ չասաց։ Յետո էդ մարդ գնաց ուր սենյակ, փոշմնավ, Սերոբին կանչեց ուր մոտ, ասաց.

— Ես քեզի խփեցի, համա ներողություն։

Էդ մարդ մտածեց, ասավ. «Թե Տաճկաստան յեղափոխութեն գցե՝ էս մարդը պտի գցե»։ Յետո Սերոբին ասաց.

— Քեզ փող կուտամ, ծախս կուտամ, նամակ կուտամ, գնա Թիֆլիս Արծրունյանի մոտ[2]։

Էդ մարդ Արծրունյանին գրեր էր, թե՝ «Սգնի էս տղուն, զենք առ, տուր. թող էրթա Տաճկաստան յեղափոխութեն քցա, էս աղուց մադա[3], ուրիշ մարդ չըկանա քցա»։

Յետո Սերոբ Արծրունյանի մոտ էկավ. Արծրունյանն էնոր տվեց մե բերդանկա, մե խատ էլ խանչալ, ասաց.

— Դնա՛ երկիր, մի՛ վախենա, յեղափոխութեն քցա, ես կօգնեմ քեզի։

Սերոբ էկավ Տաճկաստան 1892 թվին, սկսավ կազմակերպել ժողովրդին։ Ժողովուրդ չէր համոզվեր։ Տասնութ խոգի զինվոր ժողվեց ամեն մի գյուղից, որոնք հմեն լե քա՝ մարդ էին։ Զինվորներուց Քեռին ու Վարդգես՝ արզրումցի են, Մուշեղն, Հաջի Հակոբն ու Սիմոն՝ բիթլիսեցի են, Բարսեղ՝ Մշու դաշտի Վարդենիս գյուղից էր, Բաղդասար, Փալաբեղ Կարապետն՝ Խլաթի Ուոտափ գյուղացի են, Նադրոն՝ Կարճկանի Խնձոր գյուղացի էր, Հովհաննես՝ պասեցի էր (Գյուզալդարա), Վարդանն՝ Կարճկանի Ուրան գյուղացի էր, Զիքոն՝ Պաշվանց գյուղացի էր (Կարճկան), Աշոտն՝ Խլաթի Դատվան գյուղացի էր, Առուծ Ավագն՝ Խլաթի Կծվակ գյուղացի էր, Բարսեղ՝ Խլաթի Ծղակ գյուղացի էր, Ասվատուր, Ճարտարն ու Քյափոն՝ Խլաթի Թեղուտ գյուղացի են, Ֆլիթն ու Հասոն՝ Խլաթի Դաբավանք գյուղացի են, Հաջի Գևորգն Բուլանրխի Փրքաշեն գյուղացի էր, Անդրանիկ՝ Շափին Գարահեսարցի էր։ Մինչև էդ ժամանակ կառավարութեն Սերոբի խմբի մասին տեղեկություն չուներ։

1894-ի հունվարի 17-ին Սերոբենց գյուղացի Գրիգոր աղեն կառավարական մաջլիս էր Խլաթում. նամակ գրեց, տվեց ուր մշակ Դավոյին, տարավ Խլաթ, հանձնեց կառավարութենին։ 500 զորք, 300 ջանդարմա էկան պաշարեցին Սերոբյենց գյուղ՝ Սոխորտ։ Առավոտուն Սերոբ դուրս էկավ տնից՝ կռվելով զորքերու իյետ, իրան թալյեց դերեզմանատուն։ Իրյեք ժամ կռվելուց հետո (առաջին անգամ Սերոբի ձյեռն մոսին[4] էր էկել խասյել), զորքերի մեջից, ջանդարմի մեջից կիսելով, կռվելով՝ բանցրցավ սար՝ Նամրութա գլոխ (3,5 կիլոմետր Նամրութա բանցրությունն ա)։ Էլավ սարի գլոխ, զորքերն ընկան հետևից, դարձավ զորքերուն տարմ ու տաղան էրյեց[5]։ Զորքերն ու ջանդարմներն ետ փախան։

Զմեռ Նամրութ սարի գլխուն ամենեն քիչ 5—6 մետր ձուն ա գալիս. ձուն ճամփեն փակեր էր, էգտեղ ճամփա չկար՝ ո՛չ արևելքից, ո՛չ արևմուտքից։ Սերոբն յեռսուն կիլոմետր ձուն ճղելով՝ գնաց խասավ Շամիրամ գյուղ։ Կառավարական զորքեր հասան Սերոբի տան վրա, մտան, կողոպտեցին. ո՛չ անասուն, ո՛չ շյոր, ո՛չ հավ, ոչ մի բան չթողեցին, իստակ իսալկեցին։ Մեծ ախպորն ու ախպոր տղին բռնեցին, գացին Թեղուտ գյուղ, 17 խոգի էլ Թեղուտ գյուղեն բռնեցին։ Էդյոնց բոլորին տարան Բիթլիս, 101 տարի յերդ դրեցին։ Երկու խոգի՝ Թեղուտցիներ, բանտի մեջ ծեծելուց մեռան։

Նույն էն տարին, ապրելու 15-ին Սերոբ 10 խոգով գնաց Բիթլիս։ Էդ Մուշեղն ու Սիմոն քաղաքին ծանոթ են, էնտեղացի են, գացին բերդի վրա,

---

2 Խոսքը նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունուն է վերաբերում։

3 մադա—բացի։

4 մոսին—ֆրանսիական սիստեմի հրացան։

5 Տարմ ու տաղան էյրեց՝ ցիր ու ցան անել, ցրել։

բերդի խարավուլներուն բռնեցին, էդ 16 բանտարկյալներուն, մե խատ էլ քուրդ բանտից դուրս բերեցին։ Դնացին Մզրա գյուղ, ախպոր ու ախպոր տղի կանդալներն կտրեցին, օդրերուց խանեցին։ Կառավարութեն խրաման տվեց մի չերքեզ Ալի բեկ անունով մարդու, որն 300 ձիավորով ընկավ բոլոր գյուղերուն, սկսավ մարդկանց ծեծել, կոտրել, դաղրել, օր հիմանա՝ ո՛վ է յեղափոխական, ուրտյե՛ղ զենք կա։

1895-ի աշունն էդավ Բիթլիսու կոտորած՝ մոտ 10 խազար ջան, գյուղերուց չկոտորեցին։ Արդեն սկսավ էդտյեղ ապստամբութեն, կռիվ, խալմախալ...

1898 թվին Սերոբ գնաց Փափշեն գյուղ (Բիթլիսուց 3 կմ հեռու), նամակ գրեց Խաշմանուկի Հովակինին, էդի քաղքի մեծ շունն էր (քաղաքագլուխը), քի[6] «զինվորներուն՝ 25 մարդու, շյոր խրգա դա, ես չուզյեմ քաղաք գալ, օր քաղքի ժողովրդին վտանգ չպատահի»։

Յետո Հովակինն շորի փոխարեն 1500 թուրքի զորք խրգյեց՝ իրյեք խատ թնդանոթով։ Ջորքն էկավ, Փափշեն գյուղն պաշարեց։ Սերոբն ուր քսանխինգ զինվորով էլավ Փափշինա սարի գլուխ։ Կռիվ սկսեց։ Թուրքեր էրկու թնդանոթ դարկեցին. Անդրանիկի խորոխպեր Սարգիս էնտեղ մեռավ. թնդանոթն առավ քարին, քար կալավ գլխուն՝ մեռավ։ Յետո Սերոբն նշան բռնեց թոփչու վրեն, չթողյեց օր կրակեր։ Էրկու թոփչին էլ չկարացին կրակին, էրկուսին էլ սպանյեց։ Յետո ուր զինվորնյեր՝ 10 խոպի դնացին, խինգ մե կողմից, խինգ մեկել կողմից, «ուռա» տվին, թնդանոթնյեր վերցրեցին։ Թուրք զինվորնյեր փախան։ Թնդանոթնյեր առան, իրենց պետք չըրիգե, կապեցին, թողեցին սարի գլխից, գնացին թափվան ձոր, ջա՛րդ ու փշուր էղան։

Էդ օր թուրքերուց մինչև 500 խոգի սպանվան։ Թուրք հեծելազորք քաղաքից էկավ։ Փափշենի մոտ մե կամուրջ կար՝ Դիարբեքրի. էդ հեծելազորքի մեծն՝ Ջուանշիր Ասքյարն, հենց օր էլավ կարմնջի վրեն, Սերոբն նշան բռնեց, զորքից հեծելազորքի խրամանատարին սպանյեց։ Ջորքն էս օր տեսավ՝ թողեց փախավ։ Կառավարութեն տեսավ, օր զորքը փախավ, ինքն էլ քաղաքից էլավ փախավ։ Սերոբն յուր զինվորներու խյետ մինչև իրիկուն մյուս զորքերու խյետ կռվավ։ Փալարյեղ Կարապետն ու Հովհաննես վիրավորվան, Անդրանիկի խորոխպեր Սարգիս լե, բսինք օր՝ մեռավ[7]։

Կարապետն զինվորներու խյետ մի կերպ գնաց, Հովհաննես չըկրցավ էրթեր, ինքն իրեն թաքցրեց, օր չտեսնեին զինվորնյեր, որովհետև օր տեսնեին ծանր է, կարող է սպանեին։ Հովհաննես, մութն օր ընկավ, ոռքաշ սարի գլխեն էկավ, ընկավ գեղի մեջ։ Գյուղացու մեկ կըտեսնա՝ կը գցե կողովի մեջ, խոտով կը ծածկա, կը տանե թավլեն, կը պահա։ Թուրք զինվորնյեր կուզան կը փընտրին. չեն գտնի։

Էդոր մասին խաղ կա կապած.

Կարապետ շալկեց Հովհաննես,
Տարավ խասուց խոտի դեղ.
Արուն թափավ ըռեղ-ըռեղ։

Սերոբ տեսավ, օր ուր սրջանում (խլաթում) տմեն օր էդպես կռվու դեպեր կեղնին ուր պատճառով, մտածյեց, առավ ուր էրկու եիպոր, ուր կնկան, ուր տղին, էրկու հատ էլ զինվորի, 1899 թվին աշուն, սեպտեմբեր ամսուն էր, գնաց Սասուն։ Ասավ՝ դնամ, մյեր սրջան թող մե բիչ խանգստանա։ Գնաց Գալիեգուզան գյուղ՝ Սասուն, իբր թե Սերոբի հավատարիմ տերտերի տուն։ Մշեցի մե հատ կառավարական հայ փոլիս[8] տերտերի հետ խոսաց, տերտերին խափյեց, փող խոստացավ տերտերին. Մշուց թույն բերեց, տվեց տերտերին, ասաց.

---

6 քի—թե։

7 Փալաբեղ Կարապետի ահարկու տեսքը պատկերացնելու համար՝ Մուրադն ավելացրեց հետևյալը. «Բաթում մե ռուս կնիկ Փալարյեղ Կարապետին տեսյեր էր, էդոր կերպարանքից վախեցեր, գնացեր էր էրեխեն ընցուցյեր էր (=վիժել էր)»։

— Կովու մեջ չենք կրնա մինք էդոր (Սերոբին) աղթել, թույնով պիտի աղթենք։

Էդ օր Սերոբն ու ուր էրկու եխպար տերտերի տունն ին, կնիկն, տղեն ու էրկու զինվոր՝ ուրիշի տունն ին։ Տերտերն թույն լցրեց պանրի վրա, տվեց Սերոբին ու էրկու եխպորն։ Տերտերն մե կողմից թույն պատրաստեց, մյուս կողմից կառավարական զորքին խաբար տվեց։ Զորքն ու քուրտ աշիրաթնյերն Խալիլա Բշարի գլխավորությամբ էկան, գյուղը պաշարեցին։ Արդեն Սերոբն ու ուր էրկու ախպեր թունավորվուկ էին։ Սերոբն ըսկի չը կրցավ հրացան գցեր, թունավորվուկ էր։ Դուրս էկավ, արտի մեջ ընկավ, մեռավ։

Սերոբի կնիկն՝ Սոսեն, ուր տղեն ու զինվորնյեր՝ Սեդրակն ու Հասոն, իրյեք ժամ զորքի իյետ կռվան, հետո տղեն ու զինվորնյերն սպանվան։ Սոսեն վիրավորվավ էրկու տեղով։ Սոսեին բռնեցին, բերեցին Բիթլիս։ Սերոբի գլուխն Խալիլա Բըշիրն կտրյեց, խանձնեց կառավարութենին։ Կառավարութենն էլ գլուխ տարավ Բիթլիս, տարան, տվին առաջնորդին։ Առաջնորդն էլ տարավ Կարմրական եկեղեցին, թաղյեց (Բիթլիսու մեջի եկեղեցին)։

Կը հավատա՞ք օր, ով օր դողցնում էր, գնում էր, Սերոբի գերեզմանի խող կը բերեր, կը գցեր ջրի մեջ, կը խմեր ու դող կը կտրեր։

Սոսեն բռնեցին, բանտարկեցին, իրյեք ամիս յետո վերքեր լավցավ, թողեցին։

Ժողովուրդն խաղ կապեր էր, կերգեր.

Գալյեգուզան մանտրիկ ուռ,
Զորքեր էկան ժամու դուռ,
Սերոբ ըսաց՝ Սոսե, դուլբին[9] տուր։
Գալյեգուզան սարեսար,
Ասքյար էկավ, լլվան սար,
Զոք զարկ գետին՝ ղա՛ր, հա՛, զա՛ր։

---

8 փոլիս—ոստիկան։

9 դուլբին՝ դուրբին—հեռադիտակ։